ՀԿԿ-Ն ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ (1921—1925)

ԷՌՆԵՍՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Սոցիալիստական հասարակության ստեղծումն անհնար էր առանց կուլտուրական խոր վերափոխումների։ Դրանց մեջ կարևորագույն տեղ էր տրվում ժողովրդական կրթության նոր համակարգի ստեղծմանը։ Այդ համակարգը սկսվեց դպրոցական գործի կազմակերպումից, և ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին դպրոցական շինարարությունը դարձավ Հայաստանի կոմկուսի և կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը։

Դպրոցական շինարարությունն իրականացվում էր տնտեսական անկման, աշխատավորների նյութական ծանր վիճակի պայմաններում։ Քիչ էին դպրոցական շենքերը, ուսուցիչները, պակասում էին գրքերը, գրենական պիտույքները, չկային նստարաններ, սեղաններ, դպրոցների վերանորոգման համար անհրաժեշտ միջոցներ։ Աշակերտները պարապում էին կանգնած, պատերին հենված, հատակին նստած, գրում էին պատերի կամ սյուների վրա։ Երևանի 22 դպրոցներից միայն երկուսն էին ապահովված սեփական շենքերով[1]։ Այդ ծանր վիճակը նկատի ունենալով, ՀՍՍՀ Ժողկոմսովետը 1921 թ. հոկտեմբերի դեկրետով պահանջեց «15 Օրվա ընթացքում աղատել քաղաքացիական և զինվորական հիմնարկների, ինչպես նաև առանձին մարդկանց կողմից 1921 թ. հունվարի մեկից հետո գրավված բոլոր դպրոցական շենքերը»[2]։

Հայաստանում դպրոցական շինարարությունը սկսվեց ՀՍՍՀ կառավարության «Եկեղեցին պետությունից... և դպրոցը եկեղեցուց անջատելու վերաբերյալ» դեկրետով, որը հնարավորություն տվեց դպրոցը դնել պետության հսկողության տակ և դպրոցական աշխատանքները շաղկապել նոր մարդու դաստիարակության խնդիրների հետ։ Դպրոցն ազատվեց շահագործողների գաղափարական ազդեցությունից և դարձավ մատաղ սերնդի կոմունիստական համոզմունքների ձևավորման, գիտելիքների ձեռքբերման օջախ։ Դպրոցական գործը ղեկավարելու համար ստեղծվեց լուսավորության ժողովրդական կոմիսարիատ։ Աստիճանաբար փոխվեցին դասավանդման ձևերը, արմատավորվեց ժողովրդական կրթության նոր համակարգը։ Մտցվեց ձրի ուսուցում, դպրոցների ուսուցման երկաստիճան սիստեմ՝ շորսամյա և հնգամյա ուսուցմամբ։ Ընդարձակվեց ու նորոգվեց դպրոցական ցանցը, կատարվեց ուսուցիչների մոբիլիզացում, կազմվեցին և դպրոցներն ուղարկվեցին ծրագրեր, հրահանգներ, գնվեցին և անվճար բաժանվեցին գրքեր, գրենական պիտույքներ։

Այդ տարիներին լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ուշադրության կենտրոնում էին գտնվում դպրոցական ցանցի ընդլայնումը, անգրագիտության վերացումը և կրթության նոր ձևերի արմատավորումը։ 1921—1924 թթ. լուսժողկոմատի անմիջական օգնությամբ Կիրովականի, Զանգեզուրի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Լոռու գավառներում բացվեցին բազմաթիվ դպրոցներ։ Առանձնապես աճեց Լոռու գավառի դպրոցների թիվը՝ 21-ից հասնելով 43-ի[3]։ 1923 թ. լուսժողկոմատի որոշմամբ նախատեսվեց գյուղատնտեսա-

---

1 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 112, ց. 2, գ. 820, թ. 20։

2 Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 379, թ. 47։

3 «ՀՍՍՀ Ժողկոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը», Երևան, 1923, էջ 116։

կան առաջին աստիճանի երեքամյա դպրոցներ բացել Դիլիջանում, Կիրովականում, Նոր Բայազետում (Կամո), Գորիսում, Մեղրիում, Վաղարշապատում (Էշմիածին)[4]։ Դպրոցական շինարարությանը նյութական օգնություն ցույց տվեց գյուղական բնակչությունը։ Վերջինիս ուժերով ոչ միայն նորոգվեց դպրոցական շենքերի մեծ մասը, այլև կառուցվեցին նոր և հարմարավետ բազմաթիվ դպրոցներ։ 1923 թ. մարտին տեղի ունեցած ՀԿ/բ/Կ II համագումարը քննարկեց լուսժողկոմ Ա. Մռավյանի «Հանրապետության ժողովրդական լուսավորության վիճակի մասին» զեկուցումը և ժողովրդական լուսավորության խնդիրների վերաբերյալ ընդունեց ծավալուն որոշում։ Որոշման մեջ պահանջվում էր «Հինգ տարվա ընթացքում դպրոցները ավելացնել 60 տոկոսով, իսկ ուսուցիչների քանակը՝ 50 տոկոսով, դպրոցները ընդգրկել դպրոցահասակ բոլոր երեխաներին, լիկվիդացնել հասակավոր բնակչության այբբենական անգրագիտությունը և անցնել տարրական պարտադիր կրթության»[5]։ Համագումարը հատուկ ուշադրություն դարձրեց քաղաքական անգրագիտության վերացման, մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության, դպրոցները կոմունիստ և կոմերիտական ուսուցիչներով համալրելու խնդիրների վրա։ Համագումարի պահանջներին համապատասխան «Ա» և «Բ» աստիճանի դպրոցների վերջին դասարաններում մտցվեց «քաղաքական ուսմունքներ» առարկայի դասավանդումը։ Այդ նպատակով մշակվեցին ծրագրեր, հրահանգներ և իրականացվեց ուսուցիչների վերապատրաստում։

Դպրոցներում առանձնակի տեղ հատկացվեց հեղափոխական շարժման, դասակարգային պայքարի պատմության հարցերի լուսաբանմանը։ Հաջողությամբ էր կատարվում ՀԿ/բ/Կ համագումարի պահանջը՝ նոր դպրոցների բացման վերաբերյալ։ Չնայած դպրոցների աճին, այնուամենայնիվ, 1922—1923 ուս. տարում եղած դպրոցներում կարող էին ընդգրկվել դպրոցահասակ երեխաների 43 % միայն[6], 1923 թ. վերջերին Հայաստանի դպրոցներում սովորող աշակերտության թիվը հասնում էր 70787-ի[7]։ Այդ թվի մեջ են մտնում նաև Հայաստանում գործող Մերձավոր արևելքի օգնության Ամերիկյան կոմիտեի խնամքի տակ գտնվող դպրոցների 20367 աշակերտները[8]։ Ժողովրդական տնտեսության վերականգնման վերջում՝ 1925—1926 ուս. տարում, Հայաստանում գործող դպրոցների քանակը հասավ 790-ի, իսկ աշակերտության թիվը՝ 86726-ի[9], սակայն դպրոցներն էին ընդգրկվել 8—11 տարեկան երեխաների 63,5%-ը միայն[10]։ ՀԿ/բ/Կ-ի և Հայաստանի կառավարության ջանքերը նպատակամղվում էին այն ուղղությամբ, որպեսզի դպրոցներում ընդգրկվեն բոլոր դպրոցահասակ երեխաները։

Դպրոցական կրթության նոր համակարգի զարգացումը կապված էր հին մտավորականության վերադաստիարակման, բանվոր դասակարգի և գյուղացիության հետ սերտորեն կապված սովետական մտավորականության ստեղծման հետ։ Վ. Ի. Լենինը պահանջում էր առանձնակի ուշադրություն դարձնել հին մասնագետների հետ տարվող աշխատանքներին։ Անհրաժեշտ է, գրում էր նա, որ նրանք սոցիալիզմի օրոք ոչ միայն նյութական տեսակետից ավելի լավ ապրեն, քան կապիտալիզմի օրոք, այլ նաև «թե իրավական տեսակետից, թե բանվորների ու գյուղացիների հետ ընկերական համագործակցության տեսա-

---

4 ՀՍՍՀ ՀԱՍԾ, ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 1, թ. 7։

5 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 2, գ. 1, էջ 85—90։

6 «ՀՍԽՀ ժողկոմխորհների 1922—1923 թթ. հաշվետվությունը», Երևան, 1925, էջ 256։

7 Նույն տեղում, էջ 346—347 (տե՛ս 1-ին և 2-րդ տախտակները)

8 Նույն տեղում, տախտակ 2-րդ։

9 Ա ս ք ա ն ա զ Մ ռ ա վ յ ա ն, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 231—232։

10 Նույն տեղում, էջ 233։

կետից, թե գաղափարական տեսակետից...»[11]։ ՀԿ(բ)Կ-ն և Հայաստանի կառավարությունը բավականին ջանքեր ներդրեցին ոչ միայն հին մտավորականության վերադաստիարակման, այլև նոր մտավորականության ստեղծման գործում։ Մեծ ճիգ էր թափվում հին ուսուցչությանը նոր խնդիրներին մասնակից դարձնելու և մանկավարժության նոր դրվածքով շահագրգռելու համար։ Արխիվային փաստաթղթերն անվերապահորեն ցույց են տալիս, որ հայ մտավորականության մեծադույն մասը սովետական կարգերի հաղթանակի մեջ է տեսել հայ ժողովրդի փրկությունը, որդեգրվել է նոր գաղափարներին և իր գիտելիքներն ու աշխատանքը նվիրել մատաղ սերնդի դաստիարակության, վեհ ու շնորհակալ գործին։ Այդ են վկայում մասնավորապես 1921 թ. Հայաստանում տեղի ունեցած ուսուցիչների բազմաթիվ համագումարներում ընդունված որոշումները, ուր պատրաստակամություն էր հայտնվում միանալու Սովետական Հայաստանի դպրոցական աշխատողների բանակին, նվիրվելու հայրենի ժողովրդի հետամնացության հաղթահարման աշխատանքներին։ Այսպես, 1921 թ. հունվարի 14-ին բացված Երևանի և Էջմիածնի գավառների ուսուցիչների I համագումարը պահանջեց «վերակազմակերպել լուսավորության գործը՝ ելնելով նոր սկզբունքներից ու նպատակներից, այն ծառայեցնելով ժողովրդի շահերին»[12]։ 1921 թ. մայիսին տեղի ունեցած Դարալագյազի գավառի ուսուցիչների Քեշիշքենդի (Եղեգնաձոր) համագումարն անհրաժեշտ համարեց «ոչ մի ջանք ու միջոց չխնայել լուսավորության գործի համար»[13]։ Նման որոշում ընդունվեց նույն թվականի սեպտեմբերին տեղի ունեցած Ղափանի շրջանի ուսուցիչների I համագումարում, որտեղ նշվեց. «...Ղափանի շրջանի ուսուցչական առաջին համագումարը միանում է ՀՍԽՀ-ի դպրոցական աշխատողների մեծ բանակին... և իր ամբողջ ուժերը նվիրելու է հայրենի Ղափանի կրթության գործին»[14]։

Սովետական կարգերի նկատմամբ հայ ուսուցչության անկեղծ ու հավատարիմ վերաբերմունքն էր, որ Հայաստանի լուսավորության ժողկոմ Ասքանազ Մռավյանին իրավունք էր տալիս 1924 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ուսուցիչների համահայաստանյան անդրանիկ համագումարի ամբիոնից հայտարարելու. «Հայաստանի ուսուցչության ճնշող մեծամասնությունը, չնչին բացառությամբ, խղճի մտոք, իր աշխատանքներով արտահայտել է բարյացակամ վերաբերմունք սովետական իշխանության նկատմամբ։ Նրա ուղին Հայաստանի բանվորա-գյուղացիական աշխատավորության ուղին է, ուրիշ ճանապարհ նա չի փնտրում, կապված է աշխատավորության ծալքերի հետ, միացած հազարավոր թելերով»[15]։ Ուսուցիչներին սովետական դպրոցի մեթոդական պահանջների վերաբերյալ գիտելիքներով զինելու, նրանց գաղափարաքաղաքական համոզվածությունը և սովետական կարգերի նկատմամբ ունեցած հավատը ամրապնդելու, առարկայական մեթոդական հմտությունը բարձրացնելու նպատակով բացվում էին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ և շրջանային ուսուցչական կուրսեր։ 1922 թ. ամռանը վերապատրաստման երեք դասընթացներ են բացվել Երևանի գավառում՝ հայ, ադրբեջանցի, ինչպես նաև ասորի ուսուցիչների համար, Էջմիածնի գավառում՝ Աշտարակի, Վաղարշապատի, Արմավիրի շրջանների ուսուցիչների համար։ Նույն ժամանակամիջոցում Դիլիջանում, Նոր Բայազետում, Ղարաքիլիսայում (Կիրովական) բացված կուրսերում սովորել են 130 ուսուցիչներ[16]։ 1923 թ. ամռանը ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ են կազ-

---

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 224։

12 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 374, թ. 7—9։

13 Նույն տեղում, գ. 31, թ. 58։

14 Նույն տեղում, ֆ. 141, ց. 1, գ. 53, թ. 37։

15 Ա. Մռավյան, Նշվ. աշխ., էջ 208—209։

16 «ՀՍԽՀ ժողկոմխորհատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», էջ 269։

մակերպվել Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի (Լենինական), Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Մեղրու գավառներում, որտեղ վերապատրաստվել են 400 ուսուցիչներ և ուսուցչուհիներ[17]։ Շրջանային ուսուցչական կուրսեր են բացվել Սամադարում (Դեղակերտ), Արմավիրում և Աշտարակում, որոնց մասնակցել են 135 ուսուցիչներ[18]։

Վերապատրաստման դասընթացներում և կուրսերում դասավանդվել են բաղաքական գրագիտություն, սովետական սահմանադրություն, դպրոցավարություն, մայրենի լեզու, մաթեմատիկա, գյուղատնտեսություն, բնագիտություն և այլ առարկաներ։ Դպրոցական կրթության հաջողությունները պայմանավորված էին նաև ուսուցիչների նյութական վիճակի բարելավմամբ։ Այն Վ. Ի. Լենինը համարում էր «...գլխավորը, գլխավորն ու գլխավորը»[19], որի միջոցով ժողովրդական ուսուցիչը կդրվի այնպիսի բարձրության վրա, որին երբեք նա չի հասել։ Սկզբում Հայաստանի տնտեսական ծանր վիճակը բացասաբար էր անդրադառնում ուսուցիչների նյութական պայմանների բարելավման վրա։ Սակայն, տնտեսական աճին զուգընթաց, 1923 թ. սկսած, ուսուցիչների աշխատավարձը սկսում է բարձրանալ։ Եթե 1923—1924 ուս. տարում ուսուցիչների ամսական աշխատավարձը կազմել է 19 ռ. 20 կ., ապա 1925—1926 ուս. տարում հասել է 40 ռ.[20]։

Հայաստանի կոմկուսի և կառավարության հոգատարության շնորհիվ ուսուցչությունը ավելի համախմբվեց սովետական իշխանության շուրջը և անմնացորդ նվիրումով ձեռնամուխ եղավ մատաղ սերնդի դաստիարակության և կուլտուր-կրթական աշխատանքների կենսագործմանը։ Ուսուցչությունը հայրենասիրական պարտքի մեծ զգացում դրսևորեց չափահաս բնակչության անգրագիտության վերացման գործում։ Անգրագիտության վերացումը կուլտուրական շինարարության ամենակարևոր օղակներից էր և մեծ ջանքեր էր պահանջում։ Այդ խնդրի լուծումից էր կախված սոցիալիստական շինարարության ընթացքը, որոհետև «...անգրագետ երկրում կոմունիստական հասարակություն կառուցել չի կարելի»[21]։ Ելնելով Լենինյան այդ պատվիրանից, 1921 թ. սեպտեմբերի 21-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրատարակվեց անգրագիտության վերացման մասին ՀՍՍՀ ժողկոմսովետի դեկրետը։ Այն բոլոր անգրագետ և կիսագրագետ քաղաքացիներին պարտավորեցնում էր մայրենի լեզվով գրագիտություն սովորել։ Անգրագետների աշխատանքային ժամը գրագիտություն սովորելու ընթացքում կրճատվում էր երկու ժամով։ Այն անձինք, որոնք այս կամ այն կերպ կկասեցնեին անգրագիտության վերացման գործի ընթացքը կամ կթերանային այդ գործում, կենթարկվեին քրեական պատասխանատվության[22]։

Անգրագիտության վերացման գործը լավ հիմքերի վրա դնելու նպատակով հանրապետության լուսժողկոմատին կից ստեղծվեց անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով, իսկ 1924 թ.՝ անգրագիտության վերացմանն աջակցող ընկերություն, որը հետագայում կոչվեց «Կորչի անգրագիտությունը»։ Անգրագիտության վերացման բնագավառում աշխատող ուսուցիչների համար կազմակերպվում էին վերապատրաստման դասընթացներ, մանկավարժական կուրսեր, փորձնական դասեր, հրավիրվում էին ժողովներ, խորհրդակցություններ։ Անգրագետների և կիսագրագետների համար հրատարակվեցին անհրաժեշտ ծրագրեր, ուղեցույցներ, այբբենարաններ, ընթերցարաններ։ Անգրագետները բավականին շատ էին մասնավորապես կանանց

---

17 Նույն տեղում։

18 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 2, գ. 871, էջ 63։

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 551։

20 Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 234։

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 362։

22 «Ժամանակագրական ժողովածու (1920—1938 թթ.)», Երևան, 1963, էջ 69։

շրջանում և գյուղերում։ Շատ անգրագետներ կային արհմիության, Կարմիր բանակի, կոմերիտմիության շարքերում[23]։ 1923 թ. սեպտեմբերի 22-ի ՀՍՍՀ լուսժողկոմատի կոլեգիայի նիստը որոշեց վերացնել 5000 մարդու անգրագիտությունը, որոնց մեծ մասը լինելու էին կուսակցության, կոմերիտմիության անդամներ, միլիցիայի աշխատողներ և զորակոչային հասակի երիտասարդներ[24]։

1923 թ. մայիսին հանրապետությունում կային անգրագիտության վերացման 412 լիկկայաններ, կխաղրագետների 10 դպրոցներ, ուր սովորում էին 1112 ունկնդիրներ։ 1924 թ. միայն Երևանի դավառում կային 79 լիկկայաններ՝ 2077 ունկնդիրներով[25]։ 1923—1924 ուս. տարում Հայաստանում գործել են 429 անգրագիտության վերացման կետեր՝ 35000 ունկնդիրներով։[26]

Անգրագիտության վերացման ուղղությամբ անբասիր աշխատանք էին կատարում գավառային ու շրջանային կուսակցական կազմակերպությունները։ Դրանց անմիջական օգնությամբ ու նախաձեռնությամբ բացվում էին անգրագիտության վերացման դպրոցներ, լիկկայաններ, կազմակերպվում էին կամպանիաներ՝ «Կորչի անգրագիտությունը» լոզունգով։ 1924 թ. մարտի 31-ի Ղափանի շրջանային կուսակցական ժողովը խնդիր դրեց «բացել անգրագիտության վերացման խմբակներ»[27]։ Նույն թվականի դեկտեմբերի 14-ի Գորիսի շրջանային կոմբջիջների և գյուղական սովետների նախագահների միացյալ խորհրդակցությունը ուշադրություն է հրավիրում ոչ միայն անգրագիտության վերացման, այլև մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության խնդիրների վրա[28]։ Ստեփանավանի կոմբջիջների քարտուղարների խորհրդակցությունը պահանջում է «օգնել գյուղի կուլտուրական զարգացման գործին, գյուղերում վերացնել այբբենական և քաղաքական անգրագիտությունը»[29]։ ՀԿ(բ)Կ IV համագումարը դիրեկտիվ տվեց «միջոցներ ձեռնարկել՝ Հայաստանի խորհրդայնացման 10-րդ տարեդարձին վերացնելու անգրագիտությունը»[30]։ Համագումարի դիրեկտիվը մեծ արձագանք գտավ աշխատավորության շրջանում։ Անգրագիտության վերացումը դիտվեց որպես հարվածային ճակատ և բարձրացվեց պետական-քաղաքական աստիճանի։ Անգրագիտության վերացման աշխատանքներում ընդգրկվեցին կոմունիստական կուսակցության, մտավորականության, բանվորության, երիտասարդական կազմակերպությունների, պետական ապարատի առաջավոր և լավագույն ներկայացուցիչները։ Այդ համաժողովրդական աշխատանքի շնորհիվ Հայաստանում աստիճանաբար պակասում էր անգրագետների թիվը։ Եթե 1921—1923 թթ. Հայաստանում ապրող 1000 բնակչից գրագետ էր 169-ը, ապա ժողովրդական տնտեսության վերականգնման վերջում՝ 1926 թ., 252-ը[31]։

Եթե այդ նվաճմանը մոտենանք թվերի տեսակետից, ապա այն մեծ չէ, իսկ եթե նկատի առնենք, որ այն կատարվել է տնտեսական քայքայվածության, սովի, անասելի դժվարությունների պայմաններում, և այն էլ չորս տարվա ընթացքում, ապա այն հիրավի մեծ նվաճում է և աննախադեպ երևույթ հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։ Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին ՀԿԿ ղեկավարությամբ դպրոցական շինարարության և անգրագիտության վերացման ասպարեզներում ձեռք բեր-

---

23 «ՀՍՍՀ ժողկոմխորհատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», էջ 322—323։
24 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 1, թ. 6։
25 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 820, թ. 18։
26 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, Երևան, 1967, էջ 435։
27 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 3, գ. 196, էջ 6։
28 Նույն տեղում, թ. 40։
29 Նույն տեղում, գ. 195, թ. 13։
30 Նույն տեղում, ց. 5, գ. 1, թ. 343։
31 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, էջ 436։

ված նվաճումները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ հայ ժողովրդի հոգևոր զարգացումը հնարավոր է միայն սովետական իշխանության պայմաններում։ Այդ նվաճումները մեր ժողովրդին դուրս բերեցին կուլտուրական զարգացման և լուսավոր կյանքի լայնահուն ճանապարհ։ 1921—1925 թթ. իրականացված կուլտուրական շինարարությունը հսկայական նշանակություն ունեցավ ժողովրդի ընդհանուր զարգացման գործում և նպաստեց տնտեսական ու քաղաքական խնդիրների կատարմանը։

КОМПАРТИЯ АРМЕНИИ—ОРГАНИЗАТОР ШКОЛЬНОГО СТРОИТЕЛЬСТВА И ЛИКВИДАЦИИ НЕГРАМОТНОСТИ (1921—1925)

ЭРНЕСТ АРАКЕЛЯН

Резюме

Благодаря активной деятельности Коммунистической партии и правительства Армении в годы восстановления народного хозяйства были достигнуты существенные успехи в области школьного строительства и ликвидации неграмотности. Открывались школы, изменялись формы и методы обучения, внедрялась новая школьная система. Велика была роль партии в перевоспитании старой и создании новой интеллигенции. Эти мероприятия содействовали осуществлению экономических и политических задач, стоящих перед Советской Арменией.